

աւարտած լինելով, անկէ ուղղակի Բարիզ ուղևորեր է, հոն իւր աղ- նուաշուք եղբարց հետ ընտանե- կան գործոց կարգադրութեան հա- մար:

Հետեւաբար, այցելութեանց մի- ջոցին իր հետ գտնուող Ներկարար- եան Արթ. Տէր Պետրոս վարդա- պետն է Ս. Պատրիարքին անձնա- կան բարապան Պ. Սարգիս այս ուր- բաթ օր մայրաքաղաքս վերադար- ձան:

—Հասուն գերապայծառ դէ. օր Աշտնակ վարդապետին հետ Գուգ- զաբույի Պատրիարքարանք գալով Ս. Պատրիարքին այցելութիւն տը- լեր, և այս առթիւ երկարօրէն խորհրդակցեր են Իմուխապէնե- լու խնդրոյն վրայ, որն որ յաճոտա նայելով քանի մ'օրէ ի վեր է նորէն դժուարացեր է, Թաղապետու- թեանց կողմէն դժկամակութեանց հանդիպելով Պատրիարքարանքէն տրուած վաւերագրերը:

Կերէի թէ Բ. Դրան և վարչական ստորակարգեալ պաշտօնավարաց միջև հրահանգի կամ հասկացողու- թեան չիօթութիւն մը կայ:

(Մատն.)

Ղաթթիւ Ս. Լուսաւորիչ եկե- ղեցոյ աւագերէց և Ազգային ժո- ղովոյ անդամ Արթ. Տ. Յարութիւն յաճախ Սերովբեան, չարաթ գի- լեր լախճանեցաւ ի հասակի 75 ա- ճոց, և այսօր երկուշաբթի՝ օժման և յուղարկաւորութեան արարողու- թիւնը կատարուեցաւ Ղաթթիւյ ե- կեղեցին՝ ի ձեռն Գեր. Տ. Մաղա- թիս Օրմանեան Ս. վարդապետի բարոյչի եկեղեցւոյն:

(Մատն.)

ՆԱՄԱԿ ԱՌ. ՊԱՏ. ՎՈՒՏ

Զմիւռնիա տպեալ Արեւելեան Մամուլ ամսաթերթին դեկտ. ամ- յոյ թուոյն մէջ առ Պատ. Վուտ ուղ- ղեալ նամակ մը հրատարակուած է: Նամակագիրը, Մեծ. Գ. Յ. Բա- լազեան, յարգական կերպով ախ- նարկութիւն կընէ Պատ. Վուտի նա- մակին առ Մատն (որ հրատարա- կուած է նաեւ անցեալ տարւոյ Ա- լետաբերի 32 թուոյն մէջ), քանի մը բացատրութիւններ կը խնդրէ, և դիտողութիւններ կընէ միախնա- րական գործոյն վրայ: Կը ցուցնէ որ մեր թերթին անձկութեան պատ- ճառու չենք կրնար ամբողջովին օ- րինակել այն նամակն որ Արեւելեան Մամուլ վեց էջերը բռնած է:

Մեծ. նամակագիրն Հայոց վրայ միախնարաց հրատարակութիւններն անխորհրդով կարծիք կը յայտնէ որ, եթէ միախնարաց կողմէն ուղիղ և ստույգ տեղեկութիւն տրուած ըլ- լար Հայոց վրայ, Ամերիկացի ժո- ղովորդն և Պորտ ընկերութիւնը հարկ պիտի չհամարէին Հայոց հա- մար միախնար զրկել ի Թուրքիա: Կը պատմէ թէ ինչպէս ինք, Լոն- տոն, Անգղիացոյ մը տան մէջ վի- ռուսորուեցաւ լսելով երեւելի Անգ- ղիացիներէ, որոնց մի ջանքն եկե- ղեցական էին, սա հարցումն թէ Հայոց եկեղեցին կը հաւատայ Բր- քիստոսի աստուածութեանը, և կը յարէ թէ երբ ինքն Հայոց եկեղե- ցւոյ ուղղափառութիւնը բացատրեց յիշեալ անձնոց, անոնք ըսին որ այսպիսի եկեղեցւոյ մը միախնար զրկուելու չէ: Ապա կը պատմէ թէ ինչպէս Անգղիոյ մէջ «բարձր եկե- ղեցականաց դատ մը» կը փախա- րէ և կաշխատի Անգղիոյ և Արեւելեան եկեղեցեաց մէջյոնք միութիւն հաս- տատել, և կանցնի յիշել թէ Հա- յոց նախորդ պատրիարք, Խրիմեան սրբազան, որպիսի պատուով ըն- դուռնուեցաւ Անգղիացիներէ, թէ Մանչեսթըրի եպիսկոպոսն իր քա- հանանքովը ծաւակի վրայ դալով խնդրեց Խրիմեան հայրենի օր օրհնէ

զանոնք, և նա իւր ձեռքը կարկա- ռելով Տէրունական աղօթքն բաւ- և օրհնեց: Այս սիրուն տեսարանը և Քրիստոնէական ճշմարիտ սիրոյ օրինակն Ամերիկացւոց ուղղափա- թեան կը յանձնարարէ:

Մեծ. նամակագիրն կը հարցնէ թէ արդեօք միախնարք կրնա՞ն Հա- յոց եկեղեցւոյ բարեկարգութեան ձեռնտու ըլլալ, մինչ Հայերէն ու մանց Հայաստանեայց եկեղեցիէն անջատուելուն կողմէն, Ամերիկաց- լոց խնամոց յանձնուած Հայ ման- կըտուոյն դաստիարակութեան խնդ- րոյն գալով կը փախալքի դիտմալ թէ կուտուցուի՞ Հայ մանկուոյն յիշե- և սիրել իրենց հայրենի հողը: Մեծ յուզմամբ կը խօսի Հայոց տխուր վիճակին վրայ որ քաղաքական դերք մը չունին, բայց ունին փա- փառաւոր անցեալ մը, և թէ ներ- կային մէջ Հայոց պարծանք են մի- այն իրենց անցելոյն յիշատակն, ի- րենց մայրենի լեզուն և ազգային եկեղեցին, Կըսէ. «Դուք փորձով տեսաք, որ Հայք կը կտան, կը գա- չի իւր պապերուն եկեղեցիէն հե- ռանալու գաղափարէն, քանզի իւր եկեղեցին իրեն համար «Գն Բն է: Նա հայրենի հողէն հեռի՝ օտարու- թեան մէջ կը դեգերի, իւր թա- գաւորութիւնն, հարստութիւնն, և բուն իսկ իւր հայրենիքը կորու- ցաւ, յափշտակուեցաւ իրմէ, և ինչ մնաց իրեն, Աստուած իմ, իւր հայրենի ժառանգութիւնէն, եթէ ոչ միայն իւր լեզուն և եկեղեցին, որ կը ներկայացնէ իւր անցեալն, ազգութիւնն, և գրեթէ իւր հայ- րենիքն»:

Նամակը կը վերջնայ հետեւեալ տողերով. «Եթէ իրապէս Պորտ ըն- կերութիւնն Հայաստանեայց եկե- ղեցւոյ բարեկարգումն, և Հայ ազ- գին լուսաւորութիւնը կը բարձր, պիտի խնդրեմք որ այսուհետեւ փո- խանակ միախնարներուն՝ ընտիր գաստիարակներ ուղարկէ մեզ: Փո- խանակ եկեղեցիներ հաստատուել մեր մէջ, որոնց չեմք կարօտի, Հա- յաստանի մէջ ամեն ուրեք դպրո- տուններ հաստատէ: Դրեցէ՛ք այս- պէս ձեր Պորտ ընկերութեան, եթէ ոչ հուսկ ուրեմն մեր պիտի պար- տաւորիմք գրեթէ նոցա Ամերիկեան գիտութեանց և արուեստից լոյսը ծաւալեցէ՛ք մեր ժողովրդեան մէջ, քանզի անոնց կը կարօտիմք այժմ առաւելագոյն: Չեռնաւ եղիք և շնորհեցէ՛ք մեզ այն միջոցները, որով մեր ազգը վերականգնի և քա- ղաքակրթութեան մէջ յաստիանայ: Բայրայական դաստիարակութեամբ հանդերձ՝ սորվեցուցէ՛ք մեր ման- կըտուոյն, ինչպէս ձեր Ամերիկեան մանկուոյն կը սորվեցնէ՛ք, բարի, կտրիճ և ընտիր քաղաքացի լինել: Ներշնչեցէ՛ք անոնց սրտին մէջ հայ- րենեաց սէրը, ազատ թող տուէ՛ք զանոնք և մի արգելուք իրենց նախ- նեաց եկեղեցին յաճախելէ, կրթի- ցէ՛ք և դաստիարակեցէ՛ք զանոնք, և ձեր և մեր պաշտած Յիսուսի օ- րինակին նման՝ բոլոր անոնց. «Քա- հանային գնա և մատու ըստ պատա- րագը. » (Մատթ. Ը. 4): Այս կեր- պիւ պիտի տեսնէք որ Հայ ազգը, Հայ մանկակն հետզհետէ քաղա- քակրթեալ՝ իւրովին պիտի պահան- յէ և ձեռք բերէ այն ամեն բարե- նորոգումները, որոնց մեր եկեղե- ցին կը կարօտի, և որոյ համար դուք այնչափ կաշխատեք»:

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

Մեծ. Տէր, Գ. Յ. Բալազեան, ՉԻԻՈՒՆԻՍ

Ձեր նամակն առ իս ուղղեալ Ա- րեւելեան Մամուլ դեկտեմբերի թու- ւոյն մէջ այն ինչ հասաւ ձեռքս: Յետ թերթիք լինելոյ որ ուղղափա- թիւն ընեմ ձեր դիտողութեանց որ առ իս, կ'ըսէք. «Պիտի խնդրեմ

խնայունք մեզ թէ որո՞նք են այն միջոցները որոնցմով կը ջանաք օգ- նել մեր եկեղեցւոյ բարեկարգու- թեան»:

Պատասխանելու համար այս խնդ- րոյն, ներեցէ՛ք ինձ ուրիշ բաներ ալ ըսել զոր ձեր նամակին նիւթը կը պահանջէ:

Բարեբախտութեամբ կը թղթակ- ցեմ այնպիսի անձի մը հետ որ կը խօսի իբրեւ բարեկիրթ Քրիստոն- եայ, Արդարեւ կը գովեմ ձեր նա- մակին ազնիւ ոգին և քաղաքավար ոճը:

Կը գովեմ և կը յարգեմ նաեւ ձեր ազգասիրութիւնը և փափաքը զոր ունիք ի պահպանութիւն ձեր ազգին: Ով որ իր հայրենիքը չի սի- րեր ճշմարիտ Քրիստոնէայ չէ, Գա- լիլի մեզ առիթ տալ Հայոց ունու- լաղ սիրն իրենց ազգը: Միսիո- նարաց դպրոցներուն մէջ Հայ աշա- կերտք կը սորվին Հայոց լեզուն և պատմութիւնը. կը սորվին մանա- լանդ Աստուծոյ խօսքէն այնպիսի սկզբունք որ զմարդ կ'ընեն ճշմա- րիտ ազգասէր: Կարծեմ թէ Աւե- տարանական կոչուած Հայք քան զայլ Հայս նուազ չեն սիրել իրենց ազգը, և նուազ չեն ջանար անոր քաղաքական և ընկերական դար- գացման: Պօղոս առաքեալ ոչ ա- պաքէն ազգասէր Հրեայ էր, Պատ- յատ էր մեռանել յօգուտ իւր հայ- րենակցաց, բայց անոնք մերժեցին զնա եւ հալածեցին: Այլ, ա՛ւաղ, ո՛րչափ սխալեցան: Հրեայք մատ- նեցին զՅիսուս ի մահ խաչի, որպէս թէ առիթ չաշարհ համար Հուդ- մոյեղեցոյ գալ շնչել Հրեից ազգն իրեն: Երբեք մեր (Յով. ԺԱ. 48—50): Հայրենասիրութիւնը երբեմն կուր- քէն կը գործէ: Եթէ լուսաւորութիւն, այլեւս չի մերժիր եւ չհաղածեր, ինչպէս յաճախ կ'ընէ, զանոնք որ մանաւանդ ճշմարիտ փախալք են բարդաւաճման և երջանկութեան ազգին, եւ որ ստուգիւ լուսաւորն ճամբով կ'աշխատին ազգին համար:

Իրաւացի է արդեօք զԱմերիկա- ցի միախնարս համարել թշնամի Հայ ազգին: Թող զԱմերիկացին, ուրիշ ազգաց դատու մն ինչ է այս խնդրոյն վրայ, Հաճե՛ք, ի կարգալ- ինչ որ այժմու Անգղիական դեսպա- նը Սեր Հէնրի Լէյարս կ'ըսէ իւր «Բարեւն եւ Նիւնոն» կոչուած գիր- քին մէջ, էջ 404—407, որ հրա- տարակուած է 1853 ին: Այս գի- տուն եւ որտեա անձը Փոքր Ա- սիոյ մէջ երկու երկույն ճամբու- դութեան եւ քաղմամեայ բնակու- թեան ատեն անձամբ գիտելով, եւ Հայոց վիճակին եւ միախնարաց գործին վրայ իբրեւ ակնատես խօսելով, կը վկայէ թէ տեսած էր Հայոց եկեղեցւոյն համար «բարի եւ շահեկան արդիւնք զոր անտա- րակցայ պէտք է ընծայել, » կ'ըսէ, «Ամերիկացի միախնարաց հանձա- րեղ անկողն եւ եռանդուն ջա- նից» «Այս արդիւնք, » կը յաւե- լու յետոյ, «հուսկ ուրեմն պիտի նպատեն ի կանգնուած քաղաքա- կան եւ ընկերական կացութեան նոցա (Հայոց) ի շարի ազգաց: Ինչ որ Սեր Հէնրի Լէյարս իւր 27 տա- րի առաջ ըսաւ, նոյնք կը հաստա- տէ այսօր միեւնոյն ազգութեան մի- շանցէք կարգալ նաեւ ինչ որ Կի- րակոս Էֆէնտի Ղազանճեան կ'ըսէ ի թղթին որ դեռ քանի մը օր ա- ռաջ հրատարակուեցաւ Մատին 2533 թուոյն մէջ միախնարաց եւ անոնց դպրոցներուն վրայ ի Խա- բերք:

Ձեր ուղղափառութիւնը կը հրա- լենք նաեւ հետեւեալ կէտերուն վը- լայ որ կը ցուցնեն թէ միախնարաց թիւերքս գալն ինչ արդիւնք ու- նեցած է դաստիարակութեան նը- նատմամբ. բարձր դպրոց մը Պու- ֆորթ վրայ, որուն համար եւս եւրո- ցի Քրիստոնէայ վաճառական մը (17 տարուան մէջ) տուաւ 45,000 Օսմանեան լիւրա, 11,000 լիւրա եւս թողուց կտակաւ ի մահուան ուրիշ բարձր դպրոցներ ի Խաբերք, յԱյն- թապ և ի Պէյրութ. Աւետարանի պաշտօնեայ և դաստիարակ կամ ուսուցիչ հասցունելու համար աս- տուածաբանական դպրոցներ ի Մարտուան, ի Խաբերք, ի Մարաշ և ի Մէրսին. Հոմալ-դպրոցն աղկանց համար ի Կոստանդնուպոլիս, դար- ձեալ աղկանց համար գիշերօթիկ դպրոցներ ՓոքրԱսիոյ մէջ տատուե- լու գլխաւոր քաղաքներ. բաց ի սոցանէ, 295 ուսուցիչ, որոց գրեթէ բոլորը կաշխատին այս երկրին ամեն մասին մէջ բացուած հասարակ դըպ- րոցաց մէջ, Նկատելով Հայ ազգին կարօտութիւնը և այս դպրոցաց յարգը, ո՞չ ապաքէն պարտ է խոս- տովանել թէ այնչափ ուսումնաբա- նաց հաստատութիւնը ճշմարտ և մեծ բարեբարութիւն է: Եթէ այս ամենուն վրայ յաւելունք միախնա- րաց կողմէն հրատարակուած դրոց արդիւնքը, որոց պատրաստութեան և տարածման համար իբր 70 ան- ձինք կը գործածուին իբր թարգ- մանիչ և գրաւաճառ, թող զայնու- սիկ որ միանգամայն քարոզիչ են, ո՞չ ապաքէն յայտնի է թէ Ամերի- կացի միախնարաց գործը գովելի և օգտակար է Հայ ազգին մտաւոր և բարոյական զարգացմանը:

Բայց դուք, հայրենասիրական եռանդով ըսել կ'ուզէք թէ թէ եւ- դո՞՞՞՞ է որ Ամերիկացիք Հայոց օգ- նեն դաստիարակութեան համար, բայց կը վստահեմ մի գտնէ անոնց աղեղեցութիւնը տկարացնէ Հայոց սերն առ իւրեանց եկեղեցին որ մի միայն կապէն է Հայոց ազգային միութեան: Կ'ըսէք նաեւ թէ Ամե- րիկացի միախնարք հին Քրիստոն- եայ եկեղեցւոյ մը Քրիստոնէու- թիւն քարոզելու գալով որպէս թէ լիճնամանք կ'ընեն ձեզի: Ուստի այս երկու կէտեր վրայ ըսենք քանի մը խօսի:

Ձեր ուղղափառութիւնը կը հրա- լենք նաեւ հետեւեալ կէտերուն վը- լայ որ կը ցուցնեն թէ միախնարաց թիւերքս գալն ինչ արդիւնք ու- նեցած է դաստիարակութեան նը- նատմամբ. բարձր դպրոց մը Պու- ֆորթ վրայ, որուն համար եւս եւրո- ցի Քրիստոնէայ վաճառական մը

(17 տարուան մէջ) տուաւ 45,000 Օսմանեան լիւրա, 11,000 լիւրա եւս թողուց կտակաւ ի մահուան ուրիշ բարձր դպրոցներ ի Խաբերք, յԱյն- թապ և ի Պէյրութ. Աւետարանի պաշտօնեայ և դաստիարակ կամ ուսուցիչ հասցունելու համար աս- տուածաբանական դպրոցներ ի Մարտուան, ի Խաբերք, ի Մարաշ և ի Մէրսին. Հոմալ-դպրոցն աղկանց համար ի Կոստանդնուպոլիս, դար- ձեալ աղկանց համար գիշերօթիկ դպրոցներ ՓոքրԱսիոյ մէջ տատուե- լու գլխաւոր քաղաքներ. բաց ի սոցանէ, 295 ուսուցիչ, որոց գրեթէ բոլորը կաշխատին այս երկրին ամեն մասին մէջ բացուած հասարակ դըպ- րոցաց մէջ, Նկատելով Հայ ազգին կարօտութիւնը և այս դպրոցաց յարգը, ո՞չ ապաքէն պարտ է խոս- տովանել թէ այնչափ ուսումնաբա- նաց հաստատութիւնը ճշմարտ և մեծ բարեբարութիւն է: Եթէ այս ամենուն վրայ յաւելունք միախնա- րաց կողմէն հրատարակուած դրոց արդիւնքը, որոց պատրաստութեան և տարածման համար իբր 70 ան- ձինք կը գործածուին իբր թարգ- մանիչ և գրաւաճառ, թող զայնու- սիկ որ միանգամայն քարոզիչ են, ո՞չ ապաքէն յայտնի է թէ Ամերի- կացի միախնարաց գործը գովելի և օգտակար է Հայ ազգին մտաւոր և բարոյական զարգացմանը:

Բայց դուք, հայրենասիրական եռանդով ըսել կ'ուզէք թէ թէ եւ- դո՞՞՞՞ է որ Ամերիկացիք Հայոց օգ- նեն դաստիարակութեան համար, բայց կը վստահեմ մի գտնէ անոնց աղեղեցութիւնը տկարացնէ Հայոց սերն առ իւրեանց եկեղեցին որ մի միայն կապէն է Հայոց ազգային միութեան: Կ'ըսէք նաեւ թէ Ամե- րիկացի միախնարք հին Քրիստոն- եայ եկեղեցւոյ մը Քրիստոնէու- թիւն քարոզելու գալով որպէս թէ լիճնամանք կ'ընեն ձեզի: Ուստի այս երկու կէտեր վրայ ըսենք քանի մը խօսի:

Վերջին կէտին վրայ մեր կարծի- քը շատ տարբեր է: Ամերիկայի մէջ մենք նախառնք չենք համարել մեզ օտար միախնարաց եւրոպայէն գալ և աշխատին համակցու հա- մար զմեզ իրենց վարդապետու- թիւնն ընդունել: Այսպէս Պապա- կան միախնարք բազմութեամբ կու- գան, կընդունուին յարգանք և կատարեալապատմութիւն կ'ընորհուր- անոնց: Մենք կընդունինք թէ ա- նոնք իրաւունք ունեն ջանալ սեր- մանել ինչ որ կը համարին ճշմարիտ և կարեւոր ի լաւութիւն մարդկային ազգին: Ինչ որ անոնք աշտուրէն կընեն մեր երկրին մէջ, մենք որք ջանանք բնել Կաթոլիկ երկիրներու մէջ, Իրաւացի կը համարենք որ բոլոր աշխարհք լսէ ոչ միայն Քրիս- տոնէութեան բնդ-հանուր ճշմար- տութիւնները, այլ և որոշէ ոս խն- դերը թէ Քրիստոնէութեան ո՞ր ձեւն է մարդաբան և լուսաւորն:

Իր բաղձանք որ Արեւելեան եւ կեղեցիները բարեկարգուին որպէս զի Քրիստոնէութիւնն ըլլայ անոնց մէջ մեծագոյն զօրութիւն ի բարին, ինչպէս որ եւրոպայի կրօնական բա- րեկարգութիւն եղած է այն ազգե- րուն որ զայն բնդունեցան: Կը բաղ- ձանք որ Հայք Թուրքիոյ մէջ վա- յելուն այն ազատութեան եւ բար- դաւաճման օրհնութիւնները զորս Աւետարանական Քրիստոնէութիւնը տուած է Անգղիացւոյ եւ Ամերի- կացւոյ: Այս օրհնութիւնները, նոյն եւ իսկայէն, կուգան այն լուսաւո- րութիւնէն եւ բարոյական ազգե- ցութիւնէն որ կը բոլրէ ի Սուրբ դրոց աշխարհիկ կեցուած, երբ ժողովրդ- անս ամեն տաղանձանքն մէջ շատեր իրենց կացութիւնն իրենք պիտի կը սորվին եւ կը կարգան այն գիր- քը, կը սիրեն զայն, եւ անոր նորո- գիչ զօրութիւնը կը զգան իրենց սրտին եւ վարուց մէջ: «Դուք էք

աշխարհի լոյսը, » Դուք էք երկրի աղբ, » ըսաւ Յիսուս աշակերտաց փոքրիկ խմբին: Այսպէս է նաեւ հիմա, թէպէտ ճշմարիտ հոգեւոր կեանք վարողներ համեմատու- եւ արհամարեալ, զրպարտեալ եւ հալածեալ, Հոգեւոր կեանքը զոր յիշելի, չէ ի խստամբերութեան, ի պահպանութեան եկեղեցական արարողութեանց կամ միայնակե- ցական դատարկութեան, քանզի այս ամենայն առանց հոգեւոր կե- նաց եւս կարելի է, այլ առ Աս- տուած եւ առ ընկերներն սիրոյ: Առանդուն գործերու մէջ, Հոգեւոր այն կեանքն է որ կը ստացուի տա- տուածային ճշմարտութիւնն ընդու- նելով ի սիրտ, եւ կը մտնի անե- րեւոյթ, յաւիտեական իրեր որո- ճալով, իմով բանիւ հոգեւոր կեանքն է կեանք աստուածապաշտու- թեան, որութեան, ուղղութեան, բարեխիղութեան, եւ է աղբւր ա- մնային որ կրնայ ազնուացնել զմարդ տառ եւ ի հանդերձեւում: Թերեւս սակաւք են որ ունին այս կեանքը, բայց եւ այնպէս անոր ազդեցութիւնն կը ծաւալի բոլոր բն- կերութեան վրայ որուն մէջ կը գըտ- նուին այն կեանքը վարողք: Աշ- խարհ կը բարեւոք անոնցմով թէեւ չի ճանաչար զանոնք, ինչպէս ճանաչ- ցաւ զայն որ անոնց բարոյական կենաց աղբւրն է (Ա Յովհ. Գ. 1, Կող. Գ. 3, 4): Մարքական (Բեռ- քե) կոչուած Քրիստոնէայ ժամա- նակաւ փոքր, անարգեալ եւ հա- լածեալ աղանդ էր յԱնգղիա, բայց պատմագիրն Հիւմ' որ ունհաւատ էր՝ կը վկայէ թէ Անգղիական ազգն ազատութեան եւ մեծութեան հա- մար զօր այժմիկ կը վայելէ՝ պար- տական է այն փոքր խմբին:

Կ'ուզէք որ մենք դպրոցներ հաստատենք, իսկ կրօնի գալով կը խնդրէք մենք բոլոր ինչ որ Յիսուս ըսաւ. «Եթէ յոյց զանձն քո քա- հանային՝ եւ մատու գաղտարագն» (Մատթ. Ը. 4): Մինչ քանի Մովսի- սական անտեսութիւնը կը տեսն, Յիսուս կը յորդորէր հնազանդիլ Մովսիսի բոլոր օրինաց, բայց հիմա մենք հնազանդելու ենք Աւետա- րանին: Անգղիոյ եւ Ամերիկայի մէջ մարդիկ կան որ տգէտ են Հայոց եկեղեցւոյն դաստիարակութեան, եւ ասոնց տգիտութեանը մենք պա- տասխանատու չենք, բայց զմեզ Ամերիկայէն հոս զրկողները, ինչ- պէս մեր գրաւածները բոլոր կար- դացոյնները, գիտենք ի Հայաստան եւայց եկեղեցին կը հաւատայ Քրիս- տոսի աստուածութեանը եւ թէ այս ճշմարտութիւնը պիտի բռնել նուն համար արժանի է յարգա- նաց, բայց եւ այնպէս ճանաչալով իրեն պարտք առ Աստուած եւ լոկ ի մարդասիրութեան շարժեալ կը պահեն զմեզ բուն այս գործին համար զոր կը կատարենք, եւ մեր մահաբնէն ետքը անտարակոյս ու- րիշներ պիտի գան մեր տեղը բըռ- նելու, մինչեւ որ գործը որուն հա- մար եկած ենք՝ կատարուի Ուրախ պիտի ըլլանք եթէ գրեթէ մեր բն- կերութեան յայտնէք ձեր կարծի- քը որուն վրայ խօսած էք ձերնա- մակին մէջ. մեր բնկերութիւնը ան- տարակոյս պիտի բոլ ձեզի լիճն հն- չաւ համար եւ ինչ վախճանաւ բն- կերութեան միախնարք զրկուած են հոս, եւ անոնց աշխատութե- նէն ինչ կը պատէ ապագային մէջ:

Մեր նպատակն օտար լծոյ տակ դնել չէ Հայերը. մենք կը բաղ- ձանք որ անոնք զորս կը կրթենք՝ մնան Հայ, ոչ թէ ստարանան իւ- րենց ազգէն: Աւետարանական Հայոց իրենց կացութիւնն իրենք պիտի կը սորվին եւ կը կարգան այն գիր- քը, կը սիրեն զայն, եւ անոր նորո- գիչ զօրութիւնը կը զգան իրենց սրտին եւ վարուց մէջ: «Դուք էք

ՆԻՐՈՅԱ ՊՈՐՍԱԼԱՐԸ		ԳԱՆԱԹԱ ՊՈՐՍԱԼԱՐԸ	
Ընտրա 15 Մարտ			
Նկիկիզ գոնօսիտի	97- ⁷ / ₈	Էսֆ. Ում. մարտ 5 աշխ. դր.	11-20
Աճամբ Ումուսիկ աշխուր	10- ¹ / ₂	" " " մարտ 4 աշխ. աշ.	11-20
" " գարանտոր	10- ³ / ₈	" " " Էն Էնլուք	11-21
363 Խոթիկրազը	11- ⁵ / ₈	" " " Էն աշխուր	11-20
369 " "	11- ³ / ₄	" " " Սաաթ 5 աշ.	11-20
371 " "		1865 Խոթիկ. (Մուսոն) 6 ⁰ / ₁₀₀ ֆ.	-
372 (Պօն տիւ Թրէզոր)	18- ³ / ₄	1865 " " 6 ⁰ / ₁₀₀ ֆ.	-
373 " "	10- ⁵ / ₈	1869 " (Բիւնար) 6 ⁰ / ₁₀₀ ֆ.	-
Սանիւր Պանգազը	11- ⁷ / ₈	1872 " (Պօն տիւ Թրէզոր)	-
Ուսիսա Խոթիկրազը 1875	84- ⁷ / ₈	1875 " (Բիւնար) 8 ⁰ / ₁₀₀ ֆ.	-
Ըրար Խոթիկրազը պլուրէլի	58- ⁵ / ₈	Բուսիկի լուսիկաթիկը	56- ¹ / ₂
" Խոթիկրազը (Էնլուք)	84- ³ / ₄	Բէթոր	20-
Էվիթը Ալիէնի 1877 Խոթիկ-		Հէվալէսիզ	17- ¹ / ₂
րազը	75- ³ / ₄	Ազլէ ֆայիդի	09-
Արիսա օսնիկէ	85-	—	
Ըրարի Բօլիւր Խոթիկրազը	84- ⁵ / ₈	ԱԳՍՈՒՆԼԱՐ ՖԻՆԱՆՍԸ	
377 Սաաթիսիսա Էսճամբ	86- ¹ / ₂	Գրէտի Ժէնէրալ 6 ⁰ / ₁₀₀	-
Սամիի Բարիզ 5 աշխ. վատէ		Սօսիթէ Ժէն 6 ⁰ / ₁₀₀	-
Բարիս 15 Մարտ		Խոթիկազ Պանգազը	-
Բանիւր ֆոնտօսու 5 ⁰ / ₁₀₀	85-15	Սօսիթէ Սօսման	-
" " 5 ⁰ / ₁₀₀ Ա-		Թրամիլա 5 ⁰ / ₁₀₀	-
Սօրիթմանիւր	84-72 ¹ / ₂	Լալիթօմ (մատէն)	-
" " 5 ⁰ / ₁₀₀	116-60	—	
Էսճամբ Ումուսիկ աշխուր	10-87 ¹ / ₂	ԱԳԶԷԼԵՐԻՆ ԲԻԱԶԱՍԸ	
" " գարանտոր	11-62 ¹ / ₂	Օսմանիւ լիւրալը 100 շրլուան Ղւ. ֆ.	110-
365 Խոթիկրազը	53-	Նկիկիզ լիւրալը	140-
369 " "	54-	Ֆրանսիզ ալթօնու	87-16
375 " "	57-30	Բօլ	90-04
Ուսիկի լուսիկաթ.	54-57 ¹ / ₂	Գրիկիզ ալթօնու	51-20
Սանիւր Պանգազը	926-25	Պէնազ մէնիսիկէ	107-14
Էսիս Բիւն	89- ⁹ / ₁₆	Մէթալիք	207-20
Ուսիսի Էրթը Խոթիկրազը	60- ⁵ / ₈	Պէշլիք	195-
Սայիս ֆոնտօսու	81-45	Պազը	610-
Ըրար Խոթիկ. պլուրէլի	281-25	Պազիս Գայիլէսի գարիք	8-61
Րանիսա Խարիճի Խոթիկրազը	16- ³ / ₈	—	
Սանիի Ընտրա Խոթիկիկէ	25-28	ԳԱՅՄԵՆԻՆ ԲԻԱԶԱՍԸ	
Բարիս (Պուլլար) 15 Մարտ		Էն Էրլուք	110-
Սանիւր ֆոնտօսու 5 ⁰ / ₁₀₀	116-75	Էն աշխուր	1120-
Համբ Բանիւրիկէ	10-70	Սաաթ 5 աշ.	1150-
Վիէննա, 15 Մարտ			
Սանիւր Խոթիկիկէ Գամպիս	113-65		
Սանիւր Խոթիկ Եօլ Սաճիկաթը	17-20		